ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» նոյեմբերի 2021թ. № 379

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 197 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 197 որոշմանը կից ցուցակում Անաստաս Ռեմիկի Հովհաննիսյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Ռոմիկի», հիմք ընդունելով Անաստաս Ռեմիկի Հովհաննիսյանի մահվան մասին պետական վկայականը և Մարո Գևորգի Նահապետյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի «Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան, Առափնյա, Պանրագործների, Թումանյան և Բանավան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 197 որոշմանը կից ցուցակի 24-րդ տողում նշված «Ռոմիկի» բառը փոխարինել «Ռեմիկի» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 2
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» նոյեմբերի 2021թ. № 380

«ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «Արսեն Իսահակյան Ռուդիկ» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28072021-06-0036 վկայականը և «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ–ի տնօրեն Սուսաննա Սիսակյանի 2021 թվականի հոկտեմբերի 22-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ – ին սեփականության իրավունքով պատկանող, «ք.Սպիտակ, Ալեք Մանուկյան փողոց 65 խանութ» հասցեում գտնվող 06-006-0478-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը՝ 0,008 հեկտար մակերեսով:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» նոյեմբերի 2021թ. № 381

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 69-Ն որոշման 8-րդ կետի 1-ին մասով՝ 2021 դեկտեմբերի 05-ին կայանալիք Սպիտակ համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրությանը թիվ 22/25 ընտրական տեղամասի համար տարածք վարձակալելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ բյուջեի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» գործառական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածով նախատեսված միջոցներից 60 000 ՀՀ դրամ տեղափոխել «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» գործառական դասակարգման «Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման 4216 հոդված:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» նոյեմբերի 2021թ. № 382

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 69-Ն որոշման 8-րդ կետի 1-ին մասով,հաշվի առնելով 29.10.2021թ-ի «Սպիտակի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ս.Ափուջանյանի զեկուցագիրը այն մասին,որ կազմակերպության բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի նախահաշվի «Տրանսպորտային նյութեր» 4264 տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված գումարը չի բավականացնում մինչև տարեվերջ նախատեսվող ծախսերը ֆինանսավորելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ բյուջեի «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ (այլ դասերի չպատկանող) «Սպիտակի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» ՀՈԱԿ» գործառական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածով նախատեսված միջոցներից 500 000 ՀՀ դրամ տեղափոխել «Տրանսպորտային նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4264 հոդված:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 03 » նոյեմբերի 2021թ. № 383

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի ԹԻՎ 236 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 25-ի «Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և Սպիտակ համայնքի ղեկավարի 2016 թվականի օգոստոսի 31-ի թիվ 232 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 236 որոշման 1-ին կետում նշված «Անահիտ Գյուլազյան» բառերը փոխարինել «Ազգանուշ Ֆրանգյան» բառերով, իսկ «Միշա Թամամյան-Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ» բառերը փոխարինել «Արտակ Մաթոսյան – Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԚԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 3
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2021թ. № 384

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԵՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ՝ Սերգեյ Դանիելյանի,Գուրգեն Վարդանյանի և Արամ Դարչինյանի՝ 2021 թվականի նոյեմբերի 02-ի զեկուցագիրը, Սպիտակի համայնքապետարանի քաղաքացիների սպասարկման գրասենյակի աշխատանքների բնականոն ընթացքի կազմակերպման համար անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 9 000 ՀՀ դրամ, իսկ նույն գործառական դասակարգման «Գրասենյակային նյութեր և հագուստ» տնտեսագիտական դասակարգման 4261 հոդվածից 55 500 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 3
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» նոյեմբերի 2021թ. № 385

«ՍՊԻՏԱԿԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ՍԱՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ Արտակ Մաթոսյանի զեկուցագիրը, «Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի սաներին խրախուսելու նպատակով պատվոգրեր և պատվոգրի շրջանակներ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածից հատկացնել 7 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 4
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» նոյեմբերի 2021թ. № 386

ԳԱԳԻԿ ՍԱՄՎԵԼԻ ՓԱՆՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԳԱՌՆԻԿ ՍԱՄՎԵԼԻ ՓԱՆՈՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 25102021-06-0057 վկայականը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006DSD3CNP), Գառնիկ Սամվելի Փանոսյանի և Գագիկ Սամվելի Փանոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Գառնիկ Սամվելի Փանոսյանին և Գագիկ Սամվելի Փանոսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Ս. Ավետիսյան փողոցի վրա գտնվող, 06-006-0023-0010 կադաստրային ծածկագրով, 0,0115 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և դրա վրա գտնվող 57,9 քմ մակերեսով խանութին տրամադրել «ք.Սպիտակ, Ս. Ավետիսյան, թիվ 401» հասցեն (փոստային դասիչը՝ 1801):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. Նոյեմբերի 5
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» Հոկտեմբերի 2021թ. № 387

ԱՐՏԱԿ ԱԼԲԵՐՏԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 62-րդ կետերով, հաշվի առնելով, որ ըստ անշարժ գույքի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 14102021-06-0046 վկայականի Արտակ Ալբերտի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքում գտնվող 06-006-0485-0003 կադաստրային ծածկագրով հողամասի «ք.Սպիտակ, Այգեստան 1-ին թաղամաս, թիվ 3» հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներին, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեն փոփոխելու հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006XJN3S9M) և Արտակ Ալբերտի Թորոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արտակ Ալբերտի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքում գտնվող, 06-006-0485-0003 կադաստրային ծածկագրով, 0,0929 հա մակերեսով հողամասի «ք.Սպիտակ, Այգեստան 1-ին թաղամաս, թիվ 3» հասցեն փոփոխել «ք.Սպիտակ, Այգեստան փողոց թիվ 295» հասցեով (փոստային դասիչը՝ 1802):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. Հոկտեմբերի 5
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«05» նոյեմբերի 2021թ. № 388

«ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «Արսեն Իսահակյան Ռուդիկ» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28072021-06-0022 վկայականը և «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ-ի տնօրեն Սուսաննա Սիսակյանի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել «ՍՊԻՏԱԿ ՄՈԼ» ՍՊԸ – ին սեփականության իրավունքով պատկանող, «ք.Սպիտակ, Ալեք Մանուկյան փողոց 12 խանութ» հասցեում գտնվող 06-006-0478-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը՝ 0,024 հեկտար մակերեսով:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 5
ք.Սպիտակ